

**Անդամ պետություններին ուղղված՝ Նախարարների կոմիտեի CM/Rec(2010)1
առաջարկություն
Պրոբացիայի մասին Եվրոպայի խորհրդի կանոնների վերաբերյալ**

*(Ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 2010 թվականի հունվարի 20-ին՝
նախարարների տեղակալների 1075-րդ նիստում)*

Նախարարների կոմիտեն՝ Եվրոպայի խորհրդի կանոնադրության 15.բ հոդվածի դրույթների համաձայն,

համարելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է հասնել իր անդամների միջև առավել մեծ միասնության՝ մասնավորապես ներդաշնակեցնելով ընդհանուր շահեր ներկայացնող հարցերի վերաբերյալ օրենքները,

համարելով, որ պրոբացիայի նպատակն արդար քրեական արդարադատության գործընթացին, ինչպես նաև հանցագործությունների դեպքերը կանխելու և նվազեցնելու միջոցով հանրության անվտանգությանը նպաստելն է,

համարելով, որ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմիններն արդարադատության համակարգի առանցքային մարմիններից են, և որ նրանց աշխատանքը նպաստում է քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց թվի կրճատմանը,

Հաշվի առնելով

- Եվրոպայի խորհրդի պետությունների և կառավարությունների ղեկավարների երրորդ գագաթաժողովին (Վարշավա, 2005 թվականի մայիսի 16-17) ընդունված հռչակագիրը և գործողությունների ծրագիրը՝ մասնավորապես քաղաքացիների անվտանգության հետ կապված.
- Եվրոպական երկրների արդարադատության նախարարների 26-րդ խորհրդաժողովին (Հելսինկի, 2005 թվականի ապրիլի 7-8) ընդունված թիվ 2 որոշումը (19-րդ պարբերություն),

Հաշվի առնելով

- «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիան (ԵՊՇ թիվ 5).

- «Պայմանականորեն դատապարտված կամ պայմանականորեն ազատված հանցագործություն կատարած անձանց նկատմամբ վերահսկողության մասին» եվրոպական կոնվենցիան (ԵՊՇ թիվ 51).
- «Դատավճիռների միջազգային վավերականության մասին» եվրոպական կոնվենցիան (ԵՊՇ թիվ 70).
- «Այլընտրանքային պատիժների և միջոցների մասին եվրոպական կանոնների վերաբերյալ» թիվ R (92) 16 առաջարկությունը.
- «Պատիժների կամ միջոցների կատարման հետ առնչվող անձնակազմի վերաբերյալ» թիվ R (97) 12 առաջարկությունը.
- «Քրեական գործերով միջնորդության վերաբերյալ» թիվ R (99) 19 առաջարկությունը.
- «Քրեակատարողական հիմնարկների գերբնակեցման և քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց թվի աճի վերաբերյալ» թիվ R (99) 22 առաջարկությունը.
- «Այլընտրանքային պատիժների և միջոցների մասին եվրոպական կանոնների իրականացումը բարելավելու վերաբերյալ» R(2000)22 առաջարկությունը.
- «Պայմանական ազատման (պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման) վերաբերյալ» Rec(2003)22 առաջարկությունը.
- «Քրեակատարողական հիմնարկների վարչակազմի կողմից ցմահ ազատազրկվածների և այլ երկարաժամկետ ազատազրկվածների պատժի կրումը կազմակերպելու վերաբերյալ» Rec(2003)23 առաջարկությունը.
- «Եվրոպական բանտային կանոնների վերաբերյալ» Rec(2006)2 առաջարկությունը.
- «Հանցագործությունից տուժած անձանց տրամադրվող աջակցության վերաբերյալ» Rec(2006)8 առաջարկությունը.
- «Կալանավորման, դրա կիրառման պայմանների և չարաշահման դեմ երաշխիքների վերաբերյալ» Rec(2006)13 առաջարկությունը,

Հաշվի առնելով նաև՝

- Միավորված ազգերի կազմակերպության՝ ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների նվազագույն ստանդարտ կանոնները (Տոկիոյի կանոններ),

Առաջարկում է, որ անդամ պետությունների կառավարությունները՝

- իրենց օրենսդրության, քաղաքականության մեջ և գործելակերպերում առաջնորդվեն սույն առաջարկության հավելվածներում ներառված կանոններով.
- ապահովեն սույն առաջարկության և դրան կից մեկնաբանությունների թարգմանությունն ու հնարավորինս լայն տարածումը հատկապես դատական մարմինների, դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների, քրեակատարողական ծառայությունների, ինչպես նաև լրատվամիջոցների և լայն հասարակության շրջանակներում:

Մաս I. Գործողության ոլորտը, կիրառումը, սահմանումներն ու հիմնական սկզբունքները

Գործողության ոլորտը և կիրառումը

Սույն կանոններն ուղեցույց են դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների ստեղծման ու պատշաճ գործունեության համար: Սույն կանոնները կիրառվում են նաև այլ կազմակերպությունների նկատմամբ՝ սույն կանոններով կարգավորվող խնդիրներն իրականացնելիս՝ ներառյալ այլ պետական կազմակերպությունների, հասարակական և առևտրային կազմակերպությունների նկատմամբ:

Ոչինչ սույն կանոններում չպետք է որևէ կերպ մեկնաբանվի որպես մարդու իրավունքների մասին ցանկացած համապատասխան միջազգային փաստաթղթի և չափանիշի կիրառման խոչընդոտ, որոնք առավել բարենպաստ են հանցագործություն կատարած անձի նկատմամբ վերաբերմունքի առումով:

Սույն կանոններն անհրաժեշտ է մեկնաբանել «Այլընտրանքային պատիժների և միջոցների մասին եվրոպական կանոնների վերաբերյալ» թիվ R (92) 16 առաջարկության համատեքստում:

Ավելին, նշված կանոնները լրացնում են «Պատիժների կամ միջոցների կատարման հետ առնչվող անձնակազմի վերաբերյալ» թիվ R (97) 12 առաջարկության, «Քրեական գործերով միջնորդության վերաբերյալ» թիվ R (99) 19 առաջարկության, «Այլընտրանքային պատիժների և միջոցների մասին եվրոպական կանոնների իրականացումը բարելավելու վերաբերյալ» Rec(2000)22 առաջարկության, «Պայմանական ազատման (պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման) վերաբերյալ» Rec(2003)22 առաջարկության, «Քրեակատարողական հիմնարկների վարչակազմի կողմից ցմահ ազատազրկվածների և երկարաժամկետ ազատազրկվածների պատժի կրումը կազմակերպելու վերաբերյալ» Rec(2003)23 առաջարկության, «Եվրոպական բանտային կանոնների վերաբերյալ» Rec(2006)2 առաջարկության, «Կալանավորման, դրա կիրառման պայմանների և չարաշահման դեմ

երաշխիքների վերաբերյալ» Rec(2006)13 առաջարկության համապատասխան դրույթները և պետք է մեկնաբանվեն դրանց համատեքստում:

Սահմանումները

Պրոբացիան վերաբերում է օրենքով սահմանված և հանցագործություն կատարած անձի նկատմամբ նշանակված պատիժների ու միջոցների կատարմանը հասարակությունում: Այն ներառում է մի շարք գործողություններ և միջամտություններ, որոնց թվում են վերահսկողությունը, ուղղորդումն ու աջակցությունը՝ ուղղված հանցագործություն կատարած անձի սոցիալական ներգրավմանը, ինչպես նաև հանրային անվտանգությանը նպաստելուն:

Ղատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմին նշանակում է նշված խնդիրները և պարտականությունները կատարելու համար օրենքով նախատեսված ցանկացած մարմին: Ելնելով ազգային համակարգից՝ ղատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի աշխատանքը կարող է ներառել նաև դատական և որոշում կայացնող այլ մարմիններին տեղեկություններ և խորհրդատվություն տրամադրելը՝ օգնելու համար վերջիններիս կայացնելու տեղեկացված և արդար որոշումներ, անազատության մեջ գտնվող՝ հանցագործություն կատարած անձանց ուղղորդելն ու աջակցելը՝ նախապատրաստելու նրանց ազատումն ու սոցիալական վերականգնումը, վաղաժամկետ ազատման ենթակա անձանց դիտանցելն ու աջակցելը, վերականգնողական արդարադատության շրջանակներում միջամտությունները և հանցագործությունից տուժած անձանց օժանդակություն առաջարկելը:

Այլընտրանքային պատիժներ և միջոցներ նշանակում է պատիժներ և միջոցներ, որոնք հանցագործություն կատարած անձանց պահում են հասարակությունում և ներառում են որոշ սահմանափակումներ նրանց ազատության նկատմամբ՝ պայմանների և (կամ) պարտականությունների սահմանման միջոցով: Եզրույթը ներառում է դատական կամ վարչական մարմնի կողմից նշանակված ցանկացած պատիժ և նախքան պատժի մասին որոշում կայացնելը կամ վերջինիս փոխարեն ձեռնարկված ցանկացած միջոց, ինչպես

նաև քրեակատարողական հիմնարկից դուրս ազատագրկման դատավճռի կատարման եղանակները:

Վերականգնողական աշխատանք նշանակում է հանցագործություն կատարած անձի՝ հասարակությանը վերաինտեգրելու գործընթաց՝ կամավոր կերպով և վերջնական ազատվելուց հետո՝ կառուցողական, պլանավորված և վերահսկվող եղանակով: Սույն կանոններում եզրույթը տարանջատվում է «սոցիալական վերականգնում» եզրույթից, որը վերաբերում է օրենքով սահմանված՝ ազատվելուց հետո ներգրավմանը:

Հիմնական սկզբունքները

1. Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների նպատակը կրկնահանցագործությունը կրճատելն է՝ հանցագործություն կատարած անձի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու միջոցով նրանց վերահսկելու (ներառյալ՝ հարկ եղած դեպքում հսկելու), ուղղորդելու ու աջակցելու և նրանց բարեհաջող սոցիալական ներգրավումը խթանելու նպատակով: Պրոբացիան, ուստի, նպաստում է հանրային անվտանգությանը և արդարադատության պատշաճ իրականացմանը:

2. Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները պետք է հարգեն հանցագործություն կատարած անձանց իրավունքները: Դրանց բոլոր միջամտությունների դեպքում պետք է պատշաճ կերպով հաշվի առնվեն հանցագործություն կատարած անձանց արժանապատվությունը, առողջությունը, անվտանգությունն ու բարեկեցությունը:

3. Բոլոր դեպքերում, երբ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները զբաղվում են հանցագործությունից տուժած անձանց վերաբերող հարցերով, դրանք պետք է հարգեն նրանց իրավունքներն ու կարիքները:

4. Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները պետք է ամբողջությամբ հաշվի առնեն հանցագործություն կատարած անձանց անհատական առանձնահատկությունները, պայմանները և կարիքները՝ ապահովելու համար, որպեսզի յուրաքանչյուր դեպքում ցուցաբերվի արդարացի և

համարժեք վերաբերմունք: Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների միջամտությունները պետք է իրականացվեն՝ բացառելով խտրականությունը որևէ հիմքով, ինչպես օրինակ՝ սեռը, ռասան, մաշկի գույնը, լեզուն, կրոնը, հաշմանդամությունը, սեռական կողմնորոշումը, քաղաքական կամ այլ հայացքները, ազգային կամ սոցիալական ծագումը, էթնիկ փոքրամասնությանը պատկանելությունը, գույքային դրությունը, ծնունդը կամ այլ կարգավիճակը:

5. Որևէ պատժի կամ միջոցի կատարման ժամանակ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները հանցագործություն կատարած անձին չպետք է ծանրաբեռնեն կամ սահմանափակեն նրա իրավունքներն ավելի, քան նախատեսված է դատական կամ վարչական մարմնի որոշմամբ և պահանջվում է յուրաքանչյուր առանձին դեպքում՝ կախված հանցագործության ծանրությունից կամ կրկնահանցագործության՝ պատշաճ կերպով գնահատված ռիսկից:

6. Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները, որքանով հնարավոր է, պետք է ձգտեն հանցագործություն կատարած անձանց տեղեկացված համաձայնությունը ստանալուն և համագործակցությանը՝ նրանց առնչությամբ կատարվող միջամտության կապակցությամբ:

7. Մեղքի վերջնական հաստատմանը նախորդող ցանկացած միջամտության համար պետք է պահանջվի հանցագործություն կատարած անձանց տեղեկացված համաձայնությունը, և այդպիսի միջամտությունը չպետք է հակասի անմեղության կանխավարկածին:

8. Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները, դրանց խնդիրներն ու պարտականությունները, ինչպես նաև պետական մարմինների և այլ մարմինների հետ հարաբերությունները պետք է սահմանվեն ազգային իրավունքով:

9. Պետական մարմինները պետք է շարունակեն պատասխանատվություն կրել պրոբացիայի համար նույնիսկ այն դեպքում, երբ ծառայությունները մատուցվում են այլ մարմինների կամ կամավորների կողմից:

10. Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների համար պետք է ապահովվեն համապատասխան հեղինակություն, ճանաչում և ռեսուրսներ:

11. Որոշում կայացնող մարմինները, հարկ եղած դեպքում, պետք է դիմեն դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմիններին, որպեսզի վերջիններս կրկնահանգագործությունը նվազեցնելու և ազատությունից զրկելու այլընտանքների կիրառումը խթանելու նպատակով տրամադրեն մասնագիտական խորհրդատվություն և իրականացնեն վերահսկողություն:

12. Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները պետք է համագործակցեն այլ պետական կամ մասնավոր կազմակերպությունների և տեղական համայնքների հետ՝ հանցագործություն կատարած անձանց սոցիալական ներգրավումը խթանելու նպատակով: Հանցագործություն կատարած անձանց համալիր կարիքները բավարարելու և հանրային անվտանգությունը ամրապնդելու համար անհրաժեշտ է կատարել համակարգված ու լրացուցիչ միջգերատեսչական և միջուրոտային աշխատանք:

13. Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների կողմից ձեռնարկվող բոլոր գործողություններն ու միջամտությունները պետք է համապատասխանեն ազգային և միջազգային էթիկական ու մասնագիտական ամենաբարձր չափանիշներին:

14. Անհրաժեշտ է ունենալ պրոբացիոն գործունեության հետ կապված բողոքարկման մատչելի, անկողմնակալ և արդյունավետ ընթացակարգեր:

15. Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները պետք է ենթակա լինեն պարբերական պետական ստուգումների և (կամ) անկախ դիտանցման:

16. Իրավասու մարմինները պետք է բարձրացնեն պրոբացիոն աշխատանքների արդյունավետությունը՝ խթանելով հետազոտական աշխատանքները, որոնք պետք է օգտագործվեն ուղղորդելու պրոբացիոն քաղաքականությունը և պրակտիկան:

17. Իրավասու մարմինները և դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները պետք է տեղեկացնեն լրատվամիջոցներին և լայն հասարակությանը դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների աշխատանքի մասին՝ հասարակությունում նրանց դերի և արժեքի մասին առավել լավ պատկերացման ձևավորումը խթանելու նպատակով:

ՄԱՍ II. Կառուցվածքը և անձնակազմը

Կառուցվածքը

18. Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների կառուցվածքը, կարգավիճակը և ռեսուրսները պետք է համապատասխանեն նրանց վերապահված խնդիրների և պարտականությունների ծավալին և արտացոլեն նրանց կողմից իրականացվող հանրային ծառայության կարևորությունը:

19. Անկախ այն հանգամանքից՝ պրոբացիոն ծառայությունները տրամադրվում են պետական թե՛ մասնավոր կազմակերպությունների կողմից, մարմինները պետք է աշխատեն իրավասու մարմինների կողմից նախատեսված քաղաքականության պաշտոնական ցուցումներին և կանոններին համապատասխան:

20. Հանցագործություն կատարած անձանց պրոբացիոն ծառայություններ մատուցող ցանկացած մասնավոր մարմին պետք է հաստատվի իրավասու մարմինների կողմից՝ ազգային իրավունքին համապատասխան:

Անձնակազմը

21. Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները պետք է գործեն այնպես, որպեսզի դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող անձնակազմի կարգավիճակն ու աշխատանքն արժանանան արդարադատության համակարգի այլ մարմինների և քաղաքացիական հասարակության հարգանքին: Իրավասու մարմինները պետք է փորձեն դյուրացնել այդ նպատակի իրագործումը՝ ապահովելով համապատասխան ռեսուրսներ,

նպատակաուղղված ընտրություն և ներգրավում, անձնակազմի բավարար վարձատրություն և արդյունավետ կառավարում:

22. Անձնակազմը պետք է ներգրավվի և ընտրվի հաստատված չափորոշիչներին համապատասխան, որոնց հիմքում պետք է ընկած լինի ազնվության, մարդասիրության, մասնագիտական կարողությունների, ինչպես նաև այն բարդ աշխատանքին համապատասխանության անհրաժեշտությունը, որը նրանք պետք է կատարեն:

23. Անձնակազմի բոլոր անդամները պետք է անցնեն պատրաստում և վերապատրաստում՝ իրենց պաշտոնին և մասնագիտական պատասխանատվության մակարդակին համապատասխան:

24. Նախնական վերապատրաստում պետք է անցնի ամբողջ անձնակազմը, որի նպատակը համապատասխան հմտություններ, գիտելիքներ ու արժեքներ փոխանցելն է: Անձնակազմը պետք է գնահատվի սահմանված եղանակով և պետք է շնորհվեն որակավորումներ, որոնք հավաստում են ձեռք բերված ունակությունների մակարդակը:

25. Ամբողջ անձնակազմը, գործունեության իրականացման ամբողջ ընթացքում, պետք է պահպանի և բարելավի իր գիտելիքներն ու մասնագիտական կարողությունները՝ աշխատանքի վայրում իրենց տրամադրված վերապատրաստման և զարգացման դասընթացների միջոցով:

26. Անձնակազմը պետք է անցնի վերապատրաստման դասընթացներ և նրանց պետք է հնարավորություն տրվի գործել իրենց հայեցողությամբ՝ իրավունքի, էթիկայի, կազմակերպության որդեգրած քաղաքականության, ժամանակակից մեթոդաբանական չափանիշների և վարքագծի կանոնագրքի շրջանակներում:

27. Անձնակազմը, որն աշխատում է կամ պետք է աշխատի որոշ կոնկրետ հանցագործություններ կատարած անձանց հետ, պետք է անցնի համապատասխան մասնագիտացված վերապատրաստում:

28. Վերապատրաստման դասընթացը պետք է հարմարեցված լինի հանցագործություն կատարած անձանց և, հարկ եղած դեպքում, տուժողներին, ովքեր կարող են լինել հատկապես խոցելի կամ ունենալ հատուկ կարիքներ:

29. Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող անձնակազմը պետք է ունենա բավարար թվով անդամներ, որպեսզի կարողանա արդյունավետորեն իրականացնել իր աշխատանքը: Անձնակազմի առանձին անդամեր պետք է ունեն այնքան ծանրաբեռնվածություն, որը թույլ կտա նրանց արդյունավետորեն և մարդասիրաբար վերահսկել, ուղղորդել և աջակցել հանցագործություն կատարած անձանց և, հարկ եղած դեպքում, աշխատանք տանել նրանց ընտանիքների և, անհրաժեշտության դեպքում, տուժողների հետ: Հրատապ աշխատանքների դեպքում, ղեկավարությունն է պատասխանատու լուծումներ գտնելու և հանձնարարականներ տալու անձնակազմին այն հարցերում, թե գերակայությունը որ խնդիրներին պետք է տրվի:

30. Ղեկավարությունը պետք է ապահովի պրոբացիոն աշխատանքների որակը՝ անձնակազմին առաջնորդելու, ուղղորդելու, վերահսկելու և շահագրգռելու միջոցով: Անձնակազմը պետք է պատասխանատու լինի իր գործունեության համար:

31. Ղեկավարությունը պետք է ձգտի ստեղծել ու պահպանել կայուն աշխատանքային հարաբերություններ և լավ կապեր մյուս մարմինների ու գործընկերների, կամավորների, պետական մարմինների, լրատվամիջոցների և լայն հասարակության հետ:

32. Պետք է առկա լինեն կառուցակարգեր, որոնք հնարավորություն կտան ղեկավարությանը խորհրդակցելու անձնակազմի՝ որպես մարմնի հետ՝ մասնագիտական գործելակերպի և աշխատանքի հարակից պայմաններին վերաբերող ընդհանուր հարցերի շուրջ:

33. Աշխատանքին համապատասխանող անձնակազմ ներգրավելու և պահպանելու համար անձնակազմի վարձատրությունը, նպաստները և աշխատանքի պայմանները պետք է արտացոլեն նրանց մասնագիտության հեղինակությունը և համապատասխանեն նրանց աշխատանքի բարդ բնույթին:

34. Պրոբացիոն աշխատանքներում որոշ առումներով կարող են ներգրավվել կամավորներ: Նրանք պետք է համապատասխանաբար ընտրվեն, և նրանց պետք է տրամադրվեն համապատասխան աջակցություն ու ռեսուրսներ:

Մաս III

Հաշվետվողականությունն ու հարաբերությունները այլ մարմինների հետ

35. Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները, ազգային իրավունքին համապատասխան, պետք է կապեր հաստատեն դատական մարմինների և, հարկ եղած դեպքում, այլ իրավասու մարմինների հետ և նրանց տրամադրեն տեղեկություններ: Այդ տեղեկությունները սովորաբար ընդգրկում են ընդհանրապես և կոնկրետ գործերով անազատության հավանական ազդեցության և ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների ու միջոցների նպատակահարմարության մասին տեղեկատվություն: Եթե պահանջվում են անհատական զեկույցներ, ապա տրամադրվելիք տեղեկությունները պետք է հստակ սահմանվեն:

36. Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները իրավասու մարմիններին պետք է պարբերաբար ներկայացնեն իրենց աշխատանքի հետ կապված ընդհանուր զեկույցներ և հետադարձ տեղեկություններ:

37. Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները պետք է աշխատեն համագործակցելով արդարադատության համակարգի մյուս մարմինների, օժանդակություն տրամադրող մարմինների և առավել ընդգրկուն քաղաքացիական հասարակության հետ՝ իրենց առջև դրված խնդիրներն ու պարտականությունները արդյունավետորեն կատարելու համար:

38. Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները պետք է խրախուսեն օժանդակություն տրամադրող մարմիններին և հեշտացնեն նրանց աշխատանքը, որպեսզի վերջիններս կարողանան իրականացնել իրենց վերապահված պարտականությունը՝ բավարարելու հանցագործություն կատարած անձանց՝ որպես հասարակության անդամների կարիքները:

39. Անկախ այն հանգամանքից, թե դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները և քրեակատարողական ծառայությունը կազմում են մեկ կազմակերպության մաս, դրանք պետք է աշխատեն սերտ համագործակցությամբ՝ նպաստելու համար անազատությունից դեպի հասարակական կյանք հաջող անցմանը:

40. Հարկ եղած դեպքում, համապատասխան գործընկերների հետ պետք է կնքվեն միջգերատեսչական համաձայնագրեր, որտեղ սահմանվում են ընդհանրապես և կոնկրետ գործերի կապակցությամբ համագործակցության և աջակցության պայմանները:

41. Ազգային իրավունքով պետք է նախատեսվեն մասնագիտական գաղտնիքին, տվյալների պաշտպանությանը և տեղեկությունների փոխանակմանը վերաբերող պաշտոնական ու հստակ կանոններ և հստակեցվեն այն ժամանակ, երբ ստեղծվում են նման գործընկերություններ:

Մաս IV

Պրոբացիոն աշխատանքները

Հանցավորի անձի և կյանքի հանգամանքների մասին զեկույցները

42. Ելնելով ազգային իրավական համակարգից՝ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները կարող են հանցագործություն կատարելու մեջ կասկածվող առանձին անձանց վերաբերյալ պատրաստել հանցավորի անձի և կյանքի հանգամանքների մասին զեկույցներ, որպեսզի հարկ եղած դեպքում աջակցեն դատական մարմիններին՝ մեղադրանքի վերաբերյալ որոշում կայացնելու հարցում, կամ այն հարցում, թե ինչ համարժեք պատիժներ կամ միջոցներ կիրառել: Նման դեպքում, դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները պետք է պարբերաբար դատական մարմիններին ներկայացնեն այն հանգամանքները, որոնց պարագայում նշված զեկույցը կարող է օգտակար լինել:

43. Հանցավորի անձի և կյանքի հանգամանքների մասին զեկույցները պետք է հիմնվեն հստակ նախանշված տեղեկությունների վրա և գործի քննության ընթացքում հնարավորինս ստուգվեն ու թարմացվեն:

44. Հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձանց պետք է հնարավորություն տրվի ներգրավվելու զեկույցի պատրաստմանը և, առկայության դեպքում, նրանց կարծիքը պետք է ներառվի զեկույցում, ու նրանք և (կամ) նրանց օրինական ներկայացուցիչը պետք է տեղեկացվեն դրա բովանդակության մասին:

Խորհրդարվական բնույթի այլ զեկույցները

45. Ելնելով ազգային իրավական համակարգից՝ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները կարող են պատրաստել զեկույցներ, որոնք անհրաժեշտ են իրավասու մարմիններին՝ որոշում կայացնելու համար: Դրանք ներառում են խորհրդատվություն հետևյալ հարցերի շուրջ՝

- ա) հանցագործություն կատարած անձի՝ հասարակությանը վերաինտեգրելու իրագործելիությունը.
- բ) ցանկացած հատուկ պայման, որը կարող է ներառվել հանցագործություն կատարած անձի ազատման վերաբերյալ որոշման մեջ.
- գ) ցանկացած միջամտություն, որն անհրաժեշտ է հանցագործություն կատարած անձին ազատմանը նախապատրաստելու համար:

46. Հանցագործություն կատարած անձանց պետք է հնարավորություն տրվի, հարկ եղած դեպքում, ներգրավվելու զեկույցի պատրաստմանը և նրանց կարծիքը, առկայության դեպքում, պետք է ներառվի զեկույցում, ու նրանք և (կամ) նրանց օրինական ներկայացուցիչը պետք է տեղեկացվեն դրա բովանդակության մասին:

Հանրային աշխատանքը

47. Հանրային աշխատանքն այլընտրանքային պատիժ կամ միջոց է, որը ներառում է դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների կողմից՝ չվարձատրվող, հանրության համար օգտակար աշխատանքների կազմակերպումը և վերահսկումը՝ որպես հանցագործություն կատարած անձի կողմից պատճառված վնասի իրական կամ խորհրդանշական հատուցում: Հանրային աշխատանքը չպետք է կրի նվաստացուցիչ բնույթ, և դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները պետք է ձգտեն սահմանել ու կիրառել առաջադրանքներ, որոնք նպաստում են հանցագործություն կատարած անձանց հմտությունների զարգացմանն ու սոցիալական ներգրավմանը:

48. Հանրային աշխատանքը չպետք է կատարվի ի շահ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների, դրանց անձնակազմի կամ առևտրային շահույթ ստանալու նպատակով:

49. Համապատասխան առաջադրանքները սահմանելիս դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները պետք է հաշվի առնեն հանրության և աշխատանքի անմիջական շահառուների անվտանգությունը:

50. Առողջության և անվտանգության ապահովման մասով ձեռնարկված նախազգուշական միջոցները պետք է բավարար կերպով պաշտպանեն հանրային աշխատանքի նշանակված՝ հանցագործություն կատարած անձանց և չպետք է լինեն ավելի խիստ, քան այլ աշխատողների նկատմամբ կիրառվող միջոցները:

51. Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները պետք է մշակեն հանրային աշխատանքների կատարման սխեմաներ, որոնք ներառում են հանցագործություն կատարած անձանց տարատեսակ հմտություններին և տարբեր կարիքներին համապատասխանող մի շարք առաջադրանքներ: Մասնավորապես, հանցագործություն կատարած կանանց, հանցագործություն կատարած հաշմանդամություն ունեցող անձանց, հանցագործություն կատարած երիտասարդ չափահաս անձանց և հանցագործություն կատարած մեծահասակների համար պետք է ապահովվի համապատասխան աշխատանք:

52. Հանցագործություն կատարած անձանց կողմից կատարվելիք աշխատանքների տեսակն ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել նրանց կարծիքը:

Վերահսկման միջոցները

53. Ազգային իրավունքին համապատասխան, դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները կարող են իրականացնել վերահսկողություն դատավարությունից առաջ, դրա ընթացքում և դրանից հետո, ինչպես օրինակ՝ դատավարության ընթացքում պայմանական ազատման, գրավի կիրառման, պայմանականորեն քրեական հետապնդում չիրականացնելու, պայմանական կամ

հետաձգված դատապարտման և վաղաժամկետ ազատ արձակման ընթացքում իրականացվող վերահսկողությունը:

54. Պայմանների կատարումն ապահովելու նպատակով վերահսկողության ընթացքում պետք է հաշվի առնվեն հանցագործություն կատարած առանձին անձանց յուրահատկությունը և հատուկ կարիքները:

55. Վերահսկողությունը չպետք է դիտարկվի սուկ որպես հսկողական գործառույթ, այլ նաև հանցագործություն կատարած անձանց խորհուրդ տալու, աջակցելու և շահագրգռելու միջոց: Այն պետք է համատեղվի, հարկ եղած դեպքում, դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող կամ այլ մարմինների կողմից ցուցաբերվող միջամտության այլ միջոցների հետ, ինչպես օրինակ՝ վերապատրաստումը, հմտությունների զարգացումը, աշխատանքի հնարավորությունները և բուժումը:

Հանցագործություն կատարած անձանց ընտանիքի հետ աշխատանքը

56. Հարկ եղած դեպքում և ազգային իրավունքին համապատասխան, դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները պետք է անմիջականորեն կամ գործընկեր այլ մարմինների միջոցով աջակցություն, խորհրդատվություն և տեղեկություններ առաջարկեն նաև հանցագործություն կատարած անձանց ընտանիքներին:

Էլեկտրոնային դիտանցումը

57. Եթե կիրառվում է էլեկտրոնային դիտանցում՝ որպես պրոբացիոն վերահսկողության մաս, այն պետք է համատեղվի միջամտությունների հետ, որոնք նախատեսված են ուղղումն իրականացնելու և հանցավոր գործունեությունը դադարեցնելուն նպաստելու համար:

58. Տեխնիկայի միջոցով վերահսկողության մակարդակը չպետք է առավել ընդգրկուն լինի, քան անհրաժեշտ է տվյալ դեպքում՝ հաշվի առնելով հանցագործության ծանրությունը և հանրության համար վտանգավորության աստիճանը:

Սոցիալական վերականգնումը

59. Այն դեպքում, երբ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները պատասխանատու են ազատումից հետո հանցագործություն կատարած անձանց վերահսկելու համար, այդ մարմինները պետք է համագործակցեն քրեակատարողական հիմնարկի վարչակազմի, հանցագործություն կատարած անձանց, նրանց ընտանիքների և հանրության հետ՝ նախապատրաստելու համար նրանց ազատումը և հասարակությանը վերաինտեգրումը: Նրանք պետք է կապ հաստատեն քրեակատարողական հիմնարկների իրավասու ծառայությունների հետ՝ ազատումից հետո նրանց սոցիալական և մասնագիտական ինտեգրմանն օժանդակելու նպատակով:

60. Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմիններին պետք է տրվի ազատությունից զրկված անձանց հետ շփվելու բոլոր հնարավորությունները, ինչը թույլ կտա նրանց աջակցել վերջիններիս ազատման նախապատրաստություններին և սոցիալական վերականգնման պլանավորմանը՝ անազատության ընթացքում տեղ գտած ցանկացած կառուցողական աշխատանքի վրա հիմնվելու միջոցով հոգածության դրսևորման շարունակականությունն ապահովելու նպատակով:

61. Վաղաժամկետ ազատմանը հետևող վերահսկողությունը պետք է նպատակաուղղված լինի հանցագործություն կատարած անձանց սոցիալական վերականգնման հետ կապված այնպիսի կարիքների բավարարմանը, ինչպիսիք են աշխատանքը, կացարանը, կրթությունը, ինչպես նաև ազատման պայմանների կատարումը ապահովելուն՝ կրկնահանցագործությունը կամ լուրջ վնաս պատճառելու հավանականությունը նվազեցնելու նպատակով:

Վերականգնողական աշխատանքը

62. Ազատմանը հետևող բոլոր պարտականությունների կատարումից հետո դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները ազգային իրավունքով թույլատրված լինելու դեպքում կամավոր հիմունքներով կարող են շարունակել վերականգնողական ծառայություններ առաջարկել նախկին

հանցավորներին՝ օգնելու համար որպեսզի վերջիններս շարունակեն վարել օրինապահ կյանք:

Օտարերկրյա քաղաքացիներ կամ արտերկրում պատժի ենթարկված քաղաքացիներ հանդիսացող՝ հանցագործություն կատարած անձանց հետ պրոբացիոն աշխատանքները

63. Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները պետք է տրամադրեն օտարերկրյա քաղաքացիություն ունեցող՝ հանցագործություն կատարած անձանց համար մատչելի՝ հատկապես հասարակությունում գտնվելու ընթացքում վերահսկողության և սոցիալական վերականգնման հետ կապված ծառայություններ:

64. Եթե գործում են հանցագործություն կատարած և օտարերկրյա քաղաքացիներ հանդիսացող անձանց նկատմամբ պրոբացիոն միջամտությունների տեղափոխումը թույլատրող իրավական դրույթներ, վերջիններս պետք է տեղեկացվեն այդ առնչությամբ իրենց իրավունքների մասին: Այդ անձանց ծագման երկրի՝ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող համապատասխան մարմնի (մարմինների) հետ հնարավորինս պետք է հաստատվի և պահպանվի շարունակական բնույթի սերտ համագործակցություն՝ նպատակ ունենալով հեշտացնել հանցագործություն կատարած անձանց՝ իրենց երկիր վերադարձից հետո իրականացվող անհրաժեշտ վերահսկողական միջոցառումները:

65. Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները պետք է ձգտեն ազգային մարմինների համաձայնությամբ հեշտացնել արտերկրում պատժի ենթարկված՝ իրենց հայտնի քաղաքացիների հետ շարունակական կապը և վերջիններիս աջակցության տրամադրումը, ինչպես նաև խրախուսել, որպեսզի նրանք վերադառնալուն պես օգտվեն օժանդակություն տրամադրող համապատասխան մարմինների ծառայություններից:

Մաս V

Վերահսկողության գործընթացը

Սկզբնական գնահատումը

66. Մինչ վերահսկողությունը կամ դրա ընթացքում անհրաժեշտության դեպքում պետք է անցկացվի հանցագործություն կատարած անձանց՝ կոնկրետ դեպքի պարբերական և համակողմանի վերլուծություն ներառող սկզբնական գնահատում՝ հաշվի առնելով ռիսկերը, դրական գործոնները և կարիքները, այդ կարիքների բավարարման համար անհրաժեշտ միջամտությունները, ինչպես նաև այդ միջամտություններին հանցագործություն կատարած անձանց արձագանքելու ունակությունը:

67. Հնարավորության դեպքում հանցագործություն կատարած անձանց պետք է հնարավորություն տրվի ակտիվ ներդրում ունենալ պաշտոնական սկզբնական գնահատման հարցում: Դա ենթադրում է հանցագործություն կատարած անձանց տեսակետները, անձնական ձգտումները, ինչպես նաև ապագայում հանցագործություն կատարելուց խուսափելու համար նրանց անհատական ուժեղ կողմերը և պատասխանատվությունը բավարար չափով հաշվի առնելը:

68. Հանցագործություն կատարած անձինք պետք է տեղեկացվեն սկզբնական գնահատման ընթացքի և արդյունքների վերաբերյալ:

69. Սկզբնական գնահատումը շարունակական գործընթաց է, որի ճշգրտությունը և նպատակահարմարությունը պետք է պարբերաբար վերանայվի:

70. Ցանկալի է սկզբնական գնահատում իրականացնել՝

ա) համապատասխան պատիժը կամ միջոցը որոշելիս կամ քրեական գործով կանոնավոր վարույթներն այլընտրանքային ձևերով փոխարինելու տարբերակի դիտարկման դեպքում.

բ) վերահսկողության ժամանակահատվածի սկզբում.

գ) հանցագործություն կատարած անձանց կյանքում տեղի ունեցած նշանակալից փոփոխությունների դեպքում.

դ) վերահսկողության բնույթի կամ մակարդակի հետ կապված փոփոխության վերլուծության ընթացքում.

ե) վերահսկողության միջոցի ավարտին:

71. Անձնակազմը պետք է վերապատրաստվի սույն կանոնների համաձայն սկզբնական գնահատում իրականացնելու նպատակով: Ազգային համակարգերով սկզբնական գնահատման գործիքների օգտագործում նախատեսված լինելու դեպքում անձնակազմը պետք է վերապատրաստում անցնի հասկանալու համար դրանց պոտենցիալ արժեքը և սահմանափակումները, ինչպես նաև դրանք իր մասնագիտական եզրակացությունների հիմնավորման համար օգտագործելու նպատակով:

Պլանավորումը

72. Իրավասու մարմինների կողմից պետք է պատրաստվի պատիժների և միջոցների կատարման աշխատանքային պլան և ներառվի գործի նյութերում: Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմիններն իրենց գործունեության ընթացքում պետք է ուղղորդվեն այդ պլանով, որը պետք է հնարավորություն տա անձնակազմին և հանցագործություն կատարած անձանց գնահատելու սահմանված նպատակների իրականացման մասով առաջընթացը:

73. Աշխատանքային պլանը պետք է քննարկվի և հնարավորության դեպքում համաձայնեցվի հանցագործություն կատարած անձի հետ:

74. Պլանը պետք է հիմնվի նախնական գնահատման վրա և սահմանի իրականացվելիք միջամտությունները:

75. Սկզբնական գնահատման վերանայման դեպքում աշխատանքային պլանը ըստ անհրաժեշտության պետք է համապատասխանաբար փոփոխվի:

Միջամտությունները

76. Միջամտությունները պետք է նպատակաուղղված լինեն ուղղմանը և հանցավոր գործունեության դադարեցմանը և հետևաբար պետք է լինեն կառուցողական և նշանակված պատժին կամ միջոցին համաչափ:

77. Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները պետք է կարողանան օգտագործել միջոլորտային մոտեցման վրա հիմնված տարբեր մեթոդներ և համապատասխան ուսումնասիրության արդյունքում ձեռք բերված հիմնավոր գիտելիքներ:

78. Հանցագործություն կատարած անձինք պետք է նախապես լիարժեք կերպով տեղեկացվեն առաջարկվող ցանկացած միջամտության վերաբերյալ: Պետք է ձեռնարկվեն այդ միջամտություններում նրանց ակտիվ մասնակցությունն ապահովող բոլոր քայլերը:

79. Միջամտությունների կազմակերպման և դրանց փոխանցման համար դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները համապատասխան դեպքերում պետք է դիմեն օժանդակություն տրամադրող մարմիններին:

80. Հանցագործություն կատարած անձի հետ տարվող աշխատանքերին մասնակցող անձանց թվից անկախ՝ յուրաքանչյուր դեպքի համար պետք է որոշվի անձնակազմի պատասխանատու անդամ, որի խնդիրն է գնահատել, մշակել և համակարգել ընդհանուր աշխատանքային պլանը և ապահովել հանցագործություն կատարած անձի հետ կապը և պայմանների կատարումը: Սա հատկապես կարևոր է, երբ հանցագործություն կատարած անձինք ենթակա են մեկից ավելի միջամտությունների, կամ երբ մեկից ավելի մարմիններ են ներգրավված:

Գնահատումը

81. Հանցագործություն կատարած կոնկրետ անձի առաջընթացը պետք է գնահատվի կանոնավոր ընդմիջումներով և այդ գործընթացն իր ազդեցությունը պետք է ունենա աշխատանքային պլանի վրա վերահսկողության մնացյալ ժամանակահատվածում:

Գնահատումը պետք է կազմի գործի նյութերի, իսկ անհրաժեշտության դեպքում նաև՝ որոշում կայացնող մարմին ներկայացվող հետագա զեկույցների մասը:

82. Գնահատումը պետք է արտացոլի նաև այն, թե որքանով է համաձայնեցված աշխատանքային պլանը սահմանվել, գործողության մեջ դրվել և նախատեսված արդյունքներն ունեցել: Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները համապատասխան դեպքերում պետք է կարողանան դիմել որոշում կայացնող մարմին վերահսկողության մեջ փոփոխություններ կատարելու կամ այն դադարեցնելու հարցով:

83. Գնահատման մեջ պետք է ներառվեն վերահսկողության նպատակահարմարության վերաբերյալ հանցագործություն կատարած անձանց կարծիքները:

84. Վերահսկողության ժամանակահատվածի ավարտին պետք է կատարվի վերջնական գնահատում: Հանցագործություն կատարած անձինք պետք է տեղեկացվեն, որ գնահատումը պահպանվելու է գործի նյութերում և որ դրանք կարող են վկայակոչվել ապագայում:

Կատարման ապահովումը և պայմանների կատարումը

85. Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները պետք է աշխատեն ապահովելու համար, որպեսզի հանցագործություն կատարած անձինք գործուն կերպով կատարեն իրենց նկատմամբ սահմանված վերահսկողության կանոնները, ինչպես նաև սահմանված ցանկացած պայման: Հանցագործություն կատարած անձանց հետ համագործակցության եզրեր գտնելիս նրանք չպետք է հիմնվեն միայն պայմանների չկատարման դեպքում պատժամիջոցներ կիրառելու տարբերակի վրա:

86. Հանցագործություն կատարած անձինք պետք է լիարժեք կերպով տեղեկացվեն՝ ինչ է պահանջվում իրենցից, դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող անձնակազմի պարտականությունների ու գործառույթների, ինչպես նաև պայմանների չկատարման հետևանքների վերաբերյալ:

87. Հանցագործություն կատարած անձանց կողմից սահմանված պայմաններից որևիցե մեկը չկատարելու դեպքում դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող անձնակազմը պետք է գործուն կերպով և անմիջապես արձագանքի դրան: Արձագանքելիս պետք է լիարժեքորեն հաշվի առնվեն պայմանների չկատարման հանգամանքները:

Գրառումները, տեղեկատվությունը և գաղտնիությունը

88. Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող բոլոր մարմիններն իրենց աշխատանքի վերաբերյալ պետք է կատարեն պաշտոնական, ճշգրիտ և թարմացված գրառումներ: Այդ գրառումները սովորաբար պետք է ներառեն համապատասխան անհատների վերաբերյալ՝ պատժի կամ միջոցի կատարման համար նշանակություն ունեցող տվյալներ, ինչպես նաև մարմնի և այդ անհատների միջև կապի և վերջիններիս առնչությամբ ձեռնարկված աշխատանքների վերաբերյալ գրառումներ: Նրանց կողմից պետք է գրառվեն նաև սկզբնական գնահատման, պլանավորման, միջամտության և գնահատման վերաբերյալ տվյալներ:

89. Գրառումների նկատմամբ կիրառվում են գաղտնիության և տվյալների պաշտպանության՝ ազգային իրավունքով սահմանված սկզբունքները: Գաղտնի տեղեկությունները պետք է համօգտագործվեն միայն այլ համապատասխան մարմինների հետ դրա համար նախատեսված խիստ ընթացակարգերի համաձայն և պետք է օգտագործվեն հստակ սահմանված նպատակներով:

90. Գրառումները հաշվետվողականության ապահովման կարևոր միջոց են: Դրանք պետք է կանոնավոր կերպով ստուգվեն ղեկավարների կողմից և պահանջի դեպքում հասանելի լինեն պաշտոնական ստուգումների և դիտանցման համար:

91. Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները պետք է կարողանան դատական կամ այլ իրավասու մարմիններին հաշվետու լինել ձեռնարկվող աշխատանքների, հանցագործություն կատարած անձանց առաջընթացի և նրանց կողմից պայմանների կատարման աստիճանի մասով:

92. Հանցագործություն կատարած անձանց վերաբերյալ պահվող գործի նյութերը պետք է մատչելի լինեն նրանց համար այնքանով, որքանով դա նախատեսված է ազգային իրավունքով և չի խախտում այլոց գաղտնիության իրավունքը: Հանցագործություն կատարած անձինք պետք է իրավունք ունենան վիճարկելու այդ գրառումների բովանդակությունը:

Մաս VI

Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների այլ աշխատանքը

Աշխատանքը տուժողների հետ

93. Եթե դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները հանցագործությունից տուժած անձանց ծառայություններ են մատուցում, դրանք պետք է օգնեն նրանց հաղթահարելու կատարված հանցագործության հետևանքները՝ լիարժեքորեն հաշվի առնելով նրանց կարիքների բազմազանությունը:

94. Հարկ եղած դեպքում դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները պետք է կապ հաստատեն տուժողներին օժանդակություն տրամադրող ծառայությունների հետ՝ ապահովելու, որ տուժողների կարիքները բավարարվեն:

95. Եթե դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները կապ են հաստատում տուժողների հետ և (կամ) ցանկանում են իմանալ նրանց կարծիքները, վերջիններս հստակ կերպով պետք է տեղեկացվեն այն մասին, որ հանցագործություն կատարած անձանց նկատմամբ պատիժ նշանակելու մասին որոշումներն ընդունվում են մի շարք գործոնների հիման վրա և ոչ միայն կոնկրետ տուժողին պատճառված վնասի հիման վրա:

96. Նույնիսկ եթե դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները չեն աշխատում անմիջապես տուժողների հետ, միջամտությունների ժամանակ պետք է հաշվի առնվեն տուժողների իրավունքները և կարիքները, և դրանք պետք է նպատակաուղղված լինեն տուժողներին պատճառված

վնասի մասին հանցագործություն կատարած անձանց իրազեկությունը բարձրացնելուն և այդ վնասի համար նրանց կողմից պատասխանատվություն ստանձնելուն:

Վերականգնողական արդարադատության իրականացումը

97. Եթե դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները ներգրավված են վերականգնողական արդարադատության գործընթացներում, հանցագործություն կատարած անձանց, տուժողների և հանրության իրավունքները և պարտականությունները պետք է հստակորեն սահմանվեն և ճանաչվեն: Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող անձնակազմը պետք է անցի համապատասխան վերապատրաստում: Անկախ կիրառվող կոնկրետ միջամտությունից՝ հիմնական նպատակը պետք է լինի պատճառած վնասի համար հատուցելը:

Հանցագործությունների կանխարգելումը

98. Ազգային իրավունքով նախատեսված լինելու դեպքում դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների բանիմացությունը և փորձը պետք է կիրառվեն հանցավորության նվազեցմանն ուղղված ռազմավարությունների մշակման գործում: Դա կարող է ներառել համատեղ միջամտությունների և գործընկերությունների կիրառում:

Մաս VII

Բողոքարկման ընթացակարգերը, ստուգումը և դիտանցումը

99. Ազգային իրավունքով պետք է նախատեսվեն պրոբացիոն գործունեությանը վերաբերող բողոքները քննելու և դրանց պատասխանելու հստակ, մատչելի և արդյունավետ ընթացակարգեր:

100. Նշված ընթացակարգերը պետք է լինեն արդար և անկողմնակալ:

101. Բողոք ներկայացնող անձը, ամեն դեպքում, պետք է պատշաճ կերպով տեղեկացվի քննության գործընթացի և արդյունքների վերաբերյալ:

102. Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները պետք է ապահովեն հուսալի համակարգերի առկայությունը՝ իրենց գործունեությունը դիտանցելու և բարելավելու ու պահանջվող չափանիշներին դրա համապատասխանությունն ապահովելու նպատակով:

103. Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները պետք է հաշվետու լինեն իրավասու մարմիններին և ենթակա լինեն պարբերական պետական ստուգումների և (կամ) անկախ դիտանցման ու ամբողջ ծավալով աջակցի բոլոր նման ուսումնասիրություններին: Անկախ դիտանցման մարմինների արդյունքները պետք է մատչելի դարձվեն հանրությանը:

Մաս VIII

Հետազոտությունը, գնահատումը, լրատվամիջոցների և հանրության հետ աշխատանքը

104. Պրոբացիոն քաղաքականությունը և պրակտիկան պետք է հնարավորինս հիմնված լինեն փաստերի վրա: Պետական իշխանության մարմինները պետք անհրաժեշտ ռեսուրսներ տրամադրեն մանրագնին հետազոտության և գնահատման համար:

105. Գործող օրենքների, քաղաքականության և պրակտիկայի վերանայումը պետք է հիմնված լինի հստակ գիտական գիտելիքների և հետազոտության վրա, որոնք համապատասխանում են միջազգայնորեն ընդունված չափանիշներին:

106. Լրատվամիջոցներին և հանրությանը պարբերաբար պետք է տրամադրվեն փաստացի տեղեկություններ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների կողմից իրականացվող աշխատանքի մասին: Նրանք պետք է իրազեկվեն աշխատանքի նպատակների և արդյունքների մասին՝ խրախուսելու համար հասարակությունում նրանց դերի և արժեքի առավել լավ պատկերացումը:

107. Իրավասու մարմիններին պետք է խրախուսել հրապարակել պրոբացիայի ոլորտում զարգացումների վերաբերյալ պարբերական զեկույցներ:

108. Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների կողմից իրականացվող քաղաքականությունը և գործելակերպը պետք է մատչելի լինեն այլ մարմիններին, ծառայություններից օգտվողներին և լայն հասարակությանը՝ ազգային և միջազգային մակարդակով՝ խթանելու համար վստահությունը և բարելավելու համար պրոբացիայի ստանդարտները և պրակտիկան:

Գործածվող եզրույթների սահմանումները

Վերականգնողական աշխատանք նշանակում է հանցագործություն կատարած անձին հասարակությանը վերաինտեգրելու գործընթաց՝ կամավոր հիմունքներով և վերջնական ազատվելուց հետո՝ կառուցողական, պլանավորված և վերահսկվող եղանակով: Սույն կանոններում եզրույթը տարանջատվում է «սոցիալական վերականգնում» եզրույթից, որը վերաբերում է օրենքով սահմանված՝ ազատվելուց հետո ներգրավմանը:

Սկզբնական գնահատում նշանակում է հանցագործություն կատարած անձից եկող ռիսկերը, կարիքները և ուժեղ կողմերը գնահատելու գործընթաց՝ մինչ որևէ միջամտություն պլանավորելը և (կամ) դատական կամ այլ իրավասու մարմիններին խորհրդատվություն տրամադրելը: Ի հավելումն, սկզբնական գնահատմամբ որոշվում են հանցագործություն կատարելու պատճառները, և թե արդյոք կարող են միջոցներ ձեռնարկվել՝ նվազեցնելու համար դրա կրկնվելու հավանականությունը:

Օժանդակությունը համարվում է վերահսկման գործընթացի անբաժանելի մասը՝ հսկողության հետ միաժամանակ: Այն սովորաբար ներառում է հետևյալ ծառայություններից մեկը կամ մի քանիսը՝ կացարան, աշխատանք գտնելու, կրթություն ձեռք բերելու հարցում օժանդակության տրամադրում, ընտանիքին աջակցության տրամադրում և այլն: Որոշ իրավական համակարգերում այն կարող է առանձին մարմինների կողմից տրամադրվել:

Բողոքարկումը վերաբերում է ինչպես դատական մարմին դիմում ներկայացնելուն, այնպես էլ վարչական մարմին բողոքարկելուն:

Այլընտրանքային պատիժներ և միջոցներ նշանակում են պատիժներ և միջոցներ, որոնք պահում են հանցագործություն կատարած անձանց հասարակությունում և ներառում են որոշ սահմանափակումներ նրանց ազատության նկատմամբ՝ պայմանների և (կամ) պարտականությունների սահմանման միջոցով: Եզրույթը ներառում է դատական կամ վարչական մարմնի կողմից նշանակված ցանկացած պատիժ և նախքան պատժի մասին որոշում կայացնելը կամ վերջինիս փոխարեն ձեռնարկված ցանկացած միջոց, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկից դուրս ազատազրկման դատավճռի կատարման եղանակները:

Պայմաններ և պարտականություններ նշանակում են պահանջներ, որոնք որոշում կայացնող մարմնի կողմից նշանակված պատժի կամ միջոցի անբաժան մասն են կազմում:

Հսկողություն նշանակում է աշխատանքներ, որոնք սահմանափակվում են պարզելով, թե արդյոք պատժի կամ միջոցի հետ զուգորդվող պայմանները կամ պարտականությունները հանցագործություն կատարած անձի կողմից կատարվում են, կամ ապահովվելով այդ կատարումը: Այդ աշխատանքները սովորաբար ներառում են պայմանները կամ պարտականությունները չկատարելու դեպքում առավել խիստ պատիժների կամ միջոցների կիրառումը կամ դրանց կիրառման սպառնալիքը: Հսկողության հասկացությունն ավելի նեղ է, քան վերահսկողության հասկացությունը:

Հանցագործությունների կանխարգելում նշանակում է քրեական արդարադատության համակարգի և այլ իրավասու մարմինների կողմից իրականացվող քաղաքականություն և գործունեություն՝ ուղղված հանցագործությունների կանխարգելմանը (կամ որ առավել հավանական է՝ նվազեցմանը):

Որոշում կայացնող մարմին նշանակում է այլընտրանքային պատիժ կամ միջոց նշանակելու կամ վերացնելու կամ դրա պայմանները և պարտականությունները փոփոխելու համար օրենքով լիազորված դատական, վարչական կամ այլ մարմին:

Հանցավոր գործունեության դադարեցում նշանակում է գործընթաց, որով քրեական արդարադատության մարմինների միջամտությամբ կամ առանց դրա հանցագործություն կատարած անձինք դադարեցնում են իրենց հանցավոր գործունեությունը և վարում են հանցագործություններից զերծ կյանք իրենց մարդկային կապիտալի (ինչպես օրինակ՝ անձնական հմտությունները և գիտելիքը) և իրենց սոցիալական կապիտալի (ինչպես օրինակ՝ աշխատանքը, ընտանիքը, սոցիալական կապերը և հարաբերությունները, ինչպես նաև քաղաքացիական հասարակությունում ներգրավումը) զարգացման միջոցով:

Վաղաժամկետ ազատումը ներառում է քրեակատարողական հիմնարկից ազատման բոլոր ձևերը մինչ ազատությունից զրկելու հետ կապված պատիժն ամբողջությամբ կրելը, ինչպես օրինակ՝ ժամանակավոր ազատումը, պայմանական ազատումը (պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը) կամ պայմանական ներումը:

Գնահատումը մանրամասն ուսումնասիրություն է այն մասին, թե ինչքանով են կատարվել սահմանված նպատակները: Այդ գործընթացում որոշումներ են կայացվում ձեռնարկվելիք անհրաժեշտ քայլերի առնչությամբ:

Կատարում նշանակում է դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի աշխատանքի գործնական մասն իրագործելը՝ ապահովելու համար, որ այլընտրանքային պատիժը կամ միջոցը պատշաճ կերպով ի կատար ածվի:

Միջամտություն նշանակում է ցանկացած գործողություն, որը ձեռնարկվում է հանցագործություն կատարած անձանց վերահսկելու, բուժելու, օժանդակելու կամ ուղղորդելու համար՝ հետագա հանցագործություններ կատարելուց նրանց շեղելու և օրինապահ կյանք վարելու համար նրանց օգնելու նպատակով: Միջամտությունն, այսպիսով, չի վերաբերում տեղեկություններ տրամադրելուն կամ զեկույցներ կազմելուն:

Դատական մարմին նշանակում է դատարան, դատավոր կամ դատախազ:

Ազգային իրավունք նշանակում է ոչ միայն ազգային օրենսդրի կողմից ընդունված առաջնային օրենսդրությունը, այլ նաև ցանկացած այլ պարտադիր բնույթի կանոնակարգեր և հրամաններ, ինչպես նաև դատարանների և տրիբունալների նախադեպային իրավունքը այնքանով, որքանով իրավաստեղծ այս ձևերը ճանաչվում են ազգային իրավական համակարգով:

Հանցագործություն կատարած անձ նշանակում է ցանկացած անձ, ով կասկածվում է քրեական իրավախախտում կատարելու մեջ կամ կատարել է այդպիսի իրավախախտում: Սույն առաջարկության նպատակով և չհակասելով անմեղության կանխավարկածին ու դատարանի որոշմամբ մեղքի հաստատմանը, «հանցագործություն կատարած անձ» եզրույթը ներառում է քրեական հետապնդման ենթարկվող ցանկացած անձի:

Ազատումից հետո վերահսկողություն նշանակում է վերահսկողություն վաղաժամկետ ազատման ժամանակահատվածում:

Պրոբացիան վերաբերում է օրենքով սահմանված և հանցագործություն կատարած անձի նկատմամբ նշանակված պատիժների ու միջոցների կատարմանը հասարակությունում: Այն ներառում է մի շարք գործողություններ և միջամտություններ, որոնց թվում են վերահսկողությունը, ուղղորդումն ու աջակցությունը՝ ուղղված հանցագործություն

կատարած անձի սոցիալական ներգրավմանը, ինչպես նաև հանրային անվտանգությանը նպաստելուն:

Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմին նշանակում է նշված խնդիրները և պարտականությունները կատարելու համար օրենքով նախատեսված ցանկացած մարմին: Ելնելով ազգային համակարգից՝ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի աշխատանքը կարող է ներառել նաև դատական և որոշում կայացնող այլ մարմիններին տեղեկություններ և խորհրդատվություն տրամադրելը՝ օգնելու համար վերջիններիս կայացնելու տեղեկացված և արդար որոշումներ, անազատության մեջ գտնվող՝ հանցագործություն կատարած անձանց ուղղորդելն ու աջակցելը՝ նախապատրաստելու նրանց ազատումն ու սոցիալական վերականգնումը, վաղաժամկետ ազատման ենթակա անձանց դիտանցելն ու աջակցելը, վերականգնողական արդարադատության շրջանակներում միջամտությունները և հանցագործությունից տուժած անձանց օժանդակություն առաջարկելը:

Ուղղումը լայն հասկացություն է, որը վերաբերում է հանցավոր գործունեության դադարեցման խթանմանն ուղղված միջամտությունների բազմազանությանը և հանցագործություն կատարած անձի՝ օրինապահ անձի կարգավիճակին վերականգնմանը:

Սոցիալական վերականգնումը սկսվում է անազատության մեջ պահվելու ժամանակահատվածում: Դա ազատությունից զրկված անձի՝ հասարակությունում դրական և կառավարվող եղանակով վերաինտեգրվելու գործընթացն է: Սույն կանոններում սոցիալական վերականգնումը վերաբերում է վերահսկողության ժամանակահատվածին այն բանից հետո, երբ հանցագործություն կատարած անձը լքում է քրեակատարողական հիմնարկը, սակայն դեռ ենթակա է որոշակի՝ օրենքով սահմանված պարտականությունների՝ օրինակ՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման ժամանակահատվածին: Այն պետք է տարանջատվի «վերականգնողական աշխատանք»-ից:

Վերականգնողական արդարադատությունը ներառում է մի շարք հիմնական ենթադրությունների վրա հիմնված մոտեցումներ և ծրագրեր. ա. որ, արձագանքը

հանցագործությանը պետք է հնարավորինս վերականգնի տուժողի կրած վնասը. բ. որ հանցագործություն կատարած անձանց պետք է հասկացնել, որ նրանց վարքագիծն անընդունելի է և որ այն հանգեցրել է որոշ իրական հետևանքների տուժողի և հասարակության համար. գ. որ հանցագործություն կատարած անձինք կարող են և պետք է պատասխանատվություն ստանձնեն իրենց գործողությունների համար. դ. որ տուժողները պետք է հնարավորություն ունենան արտահայտելու իրենց կարիքները և մասնակցելու հանցագործություն կատարած անձի կողմից հատուցման լավագույն ձևը որոշելուն և ե. որ հասարակությունը պարտավորություն ունի նպաստելու այդ գործընթացին:

Վերահսկողությունը վերաբերում է ինչպես օժանդակության աշխատանքներին, որոնք կատարվում են կատարող մարմնի կողմից կամ վերջինիս անունից, և որոնց նպատակն է հանցագործություն կատարած անձին հասարակությունում պահելը, այնպես էլ այն գործողություններին, որոնք ձեռնարկվում են ապահովելու համար, որ հանցագործություն կատարած անձը կատարի սահմանված բոլոր պայմանները կամ պարտականությունները, այդ թվում՝ հարկ եղած դեպքում հսկողությունը: Վերահսկողությունը կարող է լինել պարտադիր կամ կամավոր (հանցագործություն կատարած անձի դիմումի համաձայն):

Տուժող նշանակում է ֆիզիկական անձ, ով վնաս է կրել՝ ներառյալ ֆիզիկական կամ մտավոր վնասը, հոգեկան տառապանքը կամ տնտեսական կորուստը, որի պատճառ են հանդիսացել քրեական օրենքի խախտում հանդիսացող գործողությունները կամ անգործությունը: «Տուժող» եզրույթը նաև ներառում է, հարկ եղած դեպքում, անմիջական տուժողի մերձավոր ազգականներին կամ նրա խնամքի տակ գտնվող անձանց:

Կամավոր նշանակում է անձ, ով կատարում է պրոբացիոն աշխատանքներ, և ով այդ աշխատանքի դիմաց չի վարձատրվում: Դա չի բացառում փոքր գումարի վճարումը կամավորներին՝ նրանց աշխատանքի ծախսերը ծածկելու համար: